

լանջերի վրայ: Բնական ամբողջիւն են այս լեռները Բասենի սահմանադրւիսն, ուր այժմ էլ կան մի քանի բերդեր, ինչպէս նշանակում են աշխարհագրական քարտէսները: Սրանցից մէկը կոչւում է Բուա-Վալէ: Եթէ միայն անունը ճիշդ է արձանագրուած, կարելի է կարծել, որ հին Բուխա անունն է պահուած Բուհա ձեւով:

Ձեռագիրներից յայտնի է եւ Բոխա ընթերցումը: Բոխա-բերդ կարող է յանգել Բող-բերդի ինչպէս որ բախտ՝ դառնում է բաղդ, եւ ընդհակառակն Օլթի, ուրեմն հին Ուլթի փոխւում է Ուխտիք կամ Ուխթիք ձեւերի:

Լեզուական անպատեհութիւն չկայ, հակառակ պ. Սաչատրեանի լեզուագիտութեան: Կարեւորը բնաւ այն չէ, որ Բողբերդը Բուա-կալէն լինի անունով: Մնդիրը այն է, թէ այս եւ մօտակայ բերդերը իրենց տեղագրութեամբ կարող են մտնել Բասենի մէջ եւ կամ համարուել մասն նրա ռազմագիտական ամբողջիւնների շղթայի: Պ. Սաչատրեան, որ հրապարակ է գալիս որպէս երկրի տեղագրական պայմանների ծանօթ անձ, պարտք ունէր պատասխանելու այս հարցին: Եւ եթէ մի օր, փոխան Կուչկուշար սարի, իրեն ձգէր Բուհա-Վալէի շրջանը, այսօր աւելի բան կարող էր ասել, քան իր լեզուագիտական անօգուտ պտոյտները:

Լեզուական նկատումներն չեն, որ մեղդերդ եւ Բողբերդը որոնել Բասենի լեռներում, այլ որ այս լեռները տիրելով ամբողջ դաշտին հանդիսանում են բնական ամբողջիւն: Բող կարող է կապ ունենալ Բուա-Վալէի հետ, կարող է պարսկերէն բոլ բառը լինել, որ նշանակում է բարձր, հին բարդ, հայերէն բարձր, որի բոլ ձեւը մնացած է բոլանդ «բարձր» բառի մէջ: Ուրեմն Բողբերդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ «Բարձր բերդ»: Կարեւոր է տեղագրութիւնն ամենից առաջ:

Քանի որ խօսքը Բուխայի մասին է, աւելորդ չէ նկատել, որ Բուխա ցեղագրական ծագում ունի, այսինքն՝ սկզբնապէս Ժողովուրդի անունն է: Ստեփան Բիւզանդացին գիտէ «Կարինի ետեւը Եփրատի եւ Կուրի միջեւ Բոնխա Ժողովուրդ»: Ծանօթ է նաեւ Պտղոմէ, որի ձեռագիրները տալիս են Բուխա ընթերցումը,

իսկ հրատարակիչները ուղղում են Բոխա, հայերէն Բուխայի աղբյուրութեամբ:

Ստեփանի Բոնխա, որ յունարէն գրւում է Bogcha, Պտղոմէի՝ Bokcha, կարելի է կարդալ նաեւ Bolcha. հնագրական տեսակէտով հնարաւոր է:

Արդեօք հայերէն անունն եւս ընթերցելու չէ՞ Բոլխա եւ այս չէ՞ եղել արդեօք մերձաւոր առիթը, որ Պորենացին, համաձայն իր լեզուագիտական մեթոտի, Բլղար Վղնդուրին բերել է հիւսիսային Կովկասից եւ բնակեցրել Անփայտ կամ Վերին Բասենում:

Մի սոսկ ենթադրութիւն:

Պ. Սաչատրեանի առարկութիւնների քննութիւնը ցոյց է տալիս, որ նրա յաւակնոտ յայտարարութիւնները չարդարացան, որ «տեղագրական ուսումնասիրութիւնը, ինչպէս եւ Վիսիկ գետի Բարդոդոս եւ Բուլուլ գիւղերի լեզուագիտութիւնը, բնաւ իրաւունք չեն տալիս այն խրոխտ շեշտերին, որ պարոնը նետում է իր յօդուածում եւ որ տեղի չունին բանիմաց բանասիրութեան մէջ:

* * *

Նոյն բանասէրը չի կարողացել ձեռնարհ մնալ անիրաւ նկատողութիւններից մի իրաւացի խնդրում, որպիսին է Բագրեւանդ բառի ստուգարանութիւնը: Պ. Սաչատրեան չի բաւականանում միայն նրանով, որ բերում է Մարքուարտի նորերս յայտնած աւելի ստոյգ մեկնութիւնը նոյն բառի, այլ իրաւունք է համարում յետին թուով քրքրելու մեր բացատրութիւնը, որպէս թէ լեզուական օրէնքներին հակառակ առաջարկ:

Պտղոմէի ձեռագիրները ընծայում են Բագրանդաւեն ընթերցումը. միւս կողմից՝ կան պարսկական ցեղեր Քամալ-աւանդ, Հասան-աւանդ, Սիր-աւանդ անուններով: Այս երկու երեւոյթը մղել էին մեղ Բագրեւանդ վերլուծել՝ Baga-rata-varda: Տասնեակ տարիներ են անցնում եւ նորերս Մարքուարտ առաջարկում է աւելի ստոյգ վերլուծում՝ Baga-revard. ասել է թէ Baga-rai-vanda. պէտք է ասել, որ rata եւ rai միեւնոյն արմատիցն են: Նոր մեկնութեամբ vand սովորական ածանց է եւ rai-vand նշանակում է «հարուստ» եւ աստուծու մակերին է: Մինչդեռ